Լրացուցիչ համաձայնագիր թիվ 1

04.02.2020թ.-ին կնքված թիվ PD-117-02-20
Փոստային կապի, փոստային կապի հետ կապված սուրհանդակային կապի և օժանդակ ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

Ք.Երևան «07»-ը հուլիսի 2020թ.

«ՀԱՅՓՈՍ» Փակ բաժնետիրական ընկերությունը, որը կազմավորվել է Հայաստանի Հանրապետության օրենքներին համաձայն և հանդիսանում է Հայաստանի Հանրապետության փոստային կապի ազգային օպերատոր (այսուհետ՝ Ընկերություն)՝ ի դեմս Գլխավոր գործադիր տնօրենի ժ/պ Հայկ Կարապետյանի, մի կողմից, և ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը (այսուհետ Հաճախորդ)՝ ի դեմս գլխավոր քարտուղար Համլետ Բատիկյանի, մյուս կողմից, կնքեցին սույն լրացուցիչ համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

Ընկերությունը և Հաճախորդը համաձայնության են գալիս 04.02.2020թ.-ին կնքված թիվ PD-117-02-20 Փոստային կապի, փոստային կապի հետ կապված սուրհանդակային կապի և օժանդակ ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1. Պայմանագրի 3.3 կետով «սահմանվում է» բառից հետո «1 000 000 (մեկ միլիոն) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն» բառերը փոխարինել «2 180 000 (երկու միլիոն հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ» բառերով:

3. Սույն լրացուցիչ համաձայնագիրը հանդիսանում է պայմանագրի անբաժանելի մասը:

4. Սույն լրացուցիչ համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կնքման պահից:

5. Սույն լրացուցիչ համաձայնագիրը կազմված է հայերեն, հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող 2 (երկու) օրինակից: Համաձայնագրի 1 (մեկ) օրինակը մնում է Ընկերության մոտ, իսկ 1 (մեկ) օրինակը տրվում է Հաճախորդին:

6.Կողմերի իրավաբանական հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները.

Ընկերություն՝

«Հայփոստ» ՓԲԸ
ք.Երևան, Սարյան 22
«Կոնվերս բանկ» ՓԲԸ
ՀՀ 1930003703156000
ՀՎՀՀ 02507464
Հեռ.՝ /010/ 514-514

Գլխավոր գործադիր տնօրենի ժ/պ՝

Հայկ Կարապետյան _____

Հաճախորդ՝

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարություն
ք. Երևան. 0010, Կառավարական տուն 3
ՀՎՀՀ/ 02815457
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՀ/ 900011018513
Հեռ.՝ /010/ 511-381

Գլխավոր քարտուղար/

Համլետ Բատիկյան _____

Կատ.՝ Ս.Խալատրյան
Հեռ. 514-548